ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Երևան, Կառավարական տուն 3

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ N 392

Համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գրանցված անձանց ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը տեղեկացնում է ժամանակավոր թափուր պաշտոնի վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենիի համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ-տնտեսական զարգացման ծրագրերի պատասխանատուի
(ծածկագիրը՝ 3.2-3)

ա/Կատարում է աշխատակազմի քարտուղարի հանձնարարությունները՝ ժամանակին և պատշաճ որակով.

բ/կազմում և աշխատակազմի քարտուղարին է ներկայացնում համայնքի ամենամյա հողային հաշվեկշիռը

գ)կազմում և աշխատակազմի քարտուղարին է ներկայացնում համայնքի տարածքում առկա գյուղատնտեսական նշանակության հողամասերի նպատակային օգտագործման սխեմաները, դրանցում առաջարկվող փոփոխությունները

դ /ՀՀ վիճակագրական վարչություն է ներկայացնում համայնքի տարածքում աճեցվող մշակաբույսերի վերաբերյալ եռամսյակային և տարեկան հաշվետվությունները,

ե) իր մասնագիտական խորհրդատվությունն է տրամադրում համայնքի ազգաբնակչությանը բույսերի մշակության գործու.մ

զ) համայնքի տարածքում ուսումնասիրում և համապատասխան կազմակերպությանն է ներկայացնում կրծողների դեմ պայքարի անհրաժեշտ միջոցառումների ցանկը.

է/ վերահսկողություն և տեխնիկական սպասարկում է իրականացնում համայնքի տարածքում տեղադրված հակակարկտային կայանների նկատմամբ.

ը/ կազմակերպում է գարնանացանի և աշնանացանի աշխատանքները, ինչպես նաև այդ աշխատանքների համար անհրաժեշտ պարարտանյութերի, սերմացուների և դիզելային վառելիքի անհրաժեշտ քանակները ազգաբնակչությանը հասցնելու գործընթացները

թ/ իրականացնում է իր գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի, առաջարկությունների, եզրակացությունների ու այլ փաստաթղթերի պահպանության և արխիվացման աշխատանքները.

ժ/ մասնակցում է աշխատակազմի աշխատանքային ծրագրերի մշակմանը

ի/ կատարում է աշխատակազմի քարտուղարի կողմից տրված այլ հանձնարարություններ, աշխատակազմի քարտուղարին կիսամյակը մեկ ներկայացնում է հաշվետվություն իր կատարած աշխատանքների մասին:

լ/ ունի օրենքով, այլ իրավական ակտերով նախատեսված այլ իրավունքներ (սոցիալական երաշխիքներ) և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ (սահմանափակումներ):

Նշված ժամանակավոր թափուր պաշտոնները զբաղեցնելու համար պահանջվում է՝

ա/ ունի առնվազն միջին մասնագիտական կրթություն,

բ/ունի Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, Հայաստանի Հանրապետության «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Իրավական ակտերի մասին», «Վիճակագրական հաշվետվությունների մասին», «Հողային օրենսգրքի մասին» աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված իրավական այլ ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն

գ/տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը

դ/ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Նշված ժամանակավոր թափուր պաշտոնները զբաղեցնելու համար պահանջվում է՝

Տվյալ ժամանակավոր թափուր պաշտոնների առաջացման հիմքի վերացման ժամկետն է՝ մինչև համայնքային ծառայության թափուր պաշտոնը մրցույթում հաղթող ճանաչված մասնակցի (մասնակիցներից մեկի) կողմից զբաղեցնելը:

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ 2020 թվականի նոյեմբերի 18-ը ժամը 10:00:

Համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գրանցված անձինք լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող են դիմել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմ (ք.Երևան, Կառավարական տուն N 3, հեռ. 077251588):

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն